— Նա մի կորած մայր է պտռում, Մարո, բայց որտե՞ղ է, յայտնի չէ, խեղճը միշտ յիշում է նրան:

— Այդ ես էլ իմանում եմ, — պատասխանեց Մարօն:

Դառնալով դէպի մեր վրանը, մենք անցանք «Փորձութեան ձորերի» միջով: Այնտեղ էր «Վիճակի ժայռը»: Նա կոչւում էր «Վիճակի ժայռ» այն պատճառով, որ նրա վրայ ուխտաւորները փորձում են իրանց բախտը: Նրանցից իւրաքանչիւրը մօտենում է ժայռին, առնում է գետնից քարի փոքրիկ կտոր եւ կպցնում է ժայռին: Եթէ քարի կտորը մնայ նրա վրայ կպած, նշանակում է, որ նրա ուխտը ընդունելի է եղած: Իսկ եթէ պոկ գալով, քարը վայր ընկաւ, վիճակափորձը տխուր դէմքով հեռանում է խորհրդական ժայռից:

Սարօն մօտեցաւ փորձելու իր բախտը, բայց այնքան բազմութիւն թափուած էր այնտեղ, որ չկարողացաւ տեղ գտնել: Մենք թողեցինք այդ մի ուրիշ ժամանակի:

ԼԳ. ԲՈՂՈՔ ՎԱՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Գիշերից բաւական անցել էր, երբ դարձանք մեր վրանը: Պառաւ Խաթունը անքուն պահապանի նման հսկում էր: Մարգարիտը քնած էր, փոքրիկ Սալբիին սեղմած ունենալով իր գրկում: Քնի մէջ նա մոռացել էր իր քօղը, երեսը մնացել էր բաց: Պառաւը տեսնելով իմ ներս մտնելը, նրա երեսը ծածկեց: Մարօն սկսեց ծիծաղել, որ ոչ սակաւ բարկութիւն պատճառեց պառաւի մէջ:

— Դու ոչ ահն ես իմանում, ոչ ամօթը, Մարո, միայն աստուած գիտէ թէ քո վերջն ինչ կլինի... — ասաց նա ծանր կերպով:

Մարօն ժպտաց եւ ոչինչ չպատասխանեց:

Մարօն թէեւ խոստացաւ, թէ կաշխատէ, որ ճանապարհին Մարգարիտին խօսացնէ ինձ հետ, կամ նրան իր երեսը բաց անել կը տայ ինձ մօտ, բայց հնար չեղաւ. Մարգարիտը մնաց ինձ համար միշտ լուռ եւ վարագուրեալ կուռք:

Առաւօտը պէտք է լուսացնէր տիրոջ կիւրակէն — տօնի մատաղ կտրելու օրը: Ահա այդ պատճառով, կէսգիշերից սկսած, ամէն մի ուխտաւորի վրանի առջեւ, գետնում փորած հնոցի մէջ, վառւում էր կրակ, եւ նրա վրայ դրած կաթսայի մէջ եփ էր գալիս մատաղի խաշլաման: Շոգին կաթսաների արտաշնչութիւնից լցրել էր օդը ախորժ-բարեպաշտական հոտով: Մի քանի տեղերում դեռ նոր էին մորթում զոհերը: Վանքի մղդսիները փութաջան